

**2013 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ  
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ելնելով մարզում կրթության ոլորտի ներկա իրավիճակից՝ կրթության որակի և մատչելիության բարձրացումը շարունակվում է դիտվել որպես այս ոլորտի զարգացման գերակա նպատակ: 2013թ. 1-ին կիսամյակի ընթացքում հատկապես ուշադրություն է դարձվել միջնակարգ կրթության համակարգում տեղի ունեցող բարեփոխումներին, ինչպես նաև 12-ամյա կրթության, ուսումնական ծրագրերի և գնահատման նոր համակարգի, դպրոցի ավարտական, բուհական ընդունելության նոր քննական համակարգի ներդրմանը: Աշխատանքներ են իրականացվել կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հանրակրթական համակարգում ինտեգրելու ուղղությամբ:

2013 թվականի 1-ին կիսամյակում շարունակվել է դպրոցների և նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերանորոգման, տեխնիկական վերազինման և գույքի թարմացման միջոցառումները, ուսուցիչների և դաստիարակների մասնագիտական կարողությունների բարձրացման, նախադպրոցական և մասնագիտական կրթության զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացումը:

Մարզում համակարգված աշխատանք է կատարվել ուսումնական հաստատություններում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման, մանկավարժական կոլեկտիվներում աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Համայնքների ղեկավարների և կրթության համակարգի պատասխանատուների հետ համատեղ աշխատանքի արդյունքում մարզի դպրոցահասակ բոլոր երեխաներն ընդգրկված են հանրակրթությունում:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար մարզում գործող ուսումնական հաստատություններից երեքում՝ Նոր Խարբերդի N2, Արտաշատի N 1 և Արարատի N 2 դպրոցներում իրականացվել է ներառական կրթություն: Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 47 երեխաներ ընդգրկված են այդ ուսումնական հաստատություններում: Պարբերաբար իրականացվում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հաշվառում:

ՀՀ Արարատի մարզում գործում են 112 հանրակրթական՝ այդ թվում 5 ավագ, 86 միջնակարգ և 21 հիմնական դպրոցներ: Հանրակրթական դպրոցներից 21-ը գործում են մարզի քաղաքներում, 91-ը գյուղերում: Դպրոցներից 7-ը սահմանամերձ բնակավայրերում են, 3-լեռնային:

Մարզի ուսումնական հաստատություններում հանրակրթություն են ստացել 32779 աշակերտներ, 3094 աշակերտ ավարտել են 9-րդ, 2230-ը՝ 12-րդ դասարանը: 3500 աշակերտներ արժանացել են գովասանագրերի, 124 աշակերտ՝

հատուկ նմուշի վկայականի, երկու աշակերտ՝ գերազանցության մեդալի /Արտաշատ քաղաքի N2 դպրոց/:

Ուսման տարեկան առաջադիմությունը կազմում է 99.4 %, որակը՝ 29.4%:

Ուսուցչական անձնակազմի հիմնական ծանրաբեռնվածությունը մարզում կազմում է 14.2 ժամ, աշակերտ-ուսուցիչ հարաբերակցությունը՝ 9.6, դասարանների միջին խտությունը՝ 19.7 աշակերտ:

Նախորդ ուսումնական տարում մարզի ուսումնական հաստատությունների մանկավարժական կոլեկտիվների կարևորագույն խնդիրը եղել է կրթության որակի բարձրացումը:

Ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման գործում կարևոր նշանակություն են ունեցել դպրոցականների առարկայական օլիմպիադաները:

Դպրոցականների առարկայական օլիմպիադայի տարածքային փուլին մասնակցել են 3631 աշակերտներ: Օլիմպիադայի տարածքային փուլի արդյունքներով 383 աշակերտ մասնակցել են մարզային, 96-ը՝ հանրապետական փուլերին:

Օլիմպիադայի հանրապետական փուլին մասնակցած 3 աշակերտներ արժանացել են 1-ին , 6-ը՝ 2-րդ, 11-ը՝ 3-րդ կարգի դիպլոմների, 17-ը՝ գովասանագրերի: Լավ արդյունքներ են գրանցվել հումանիտար առարկաներից:

ԲՈՒՀ-ի համար միասնական քննություններ հանձնող դիմորդները անցած տարվա համեմատ պակասել է 2%-ով (37%-ից դարձել է 35%): Միասնական քննություններ հանձնելու հայտ են ներկայացրել 930 դիմորդ:

17.5-20 միավոր են ստացել՝ հայոց լեզու և գրականություն առարկայից քննություն հանձնող դիմորդների 18.6% -ը, մաթեմատիկայից՝ 13.8% , հայոց պատմությունից՝ 29.4%, ֆիզիկայից՝ 11.4%:

Գոհացուցիչ են մաթեմատիկա և հայոց պատմություն առարկաներից դիմորդների ցուցաբերած արդյունքները: Մաթեմատիկայի հանրապետական միջինից մարզի արդյունքները գերազանցում են 5.1%-ով, իսկ հայոց պատմությունից՝ 22.6%-ով:

2013թ. անցկացված <Տարվա լավագույն տնօրեն, ուսուցիչ և դաստիարակ> մրցույթի մարզային փուլի արդյունքներով մարզի լավագույն տնօրեն է ճանաչվել Վանաշենի միջնակարգ դպրոցի տնօրեն Անիկ Մանուկյանը, լավագույն ուսուցիչ՝ Արտաշատ քաղաքի N2 դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Անահիտ Թադևոսյանը, իսկ լավագույն դաստիարակ՝ Արարատ քաղաքի N1 մանկապարտեզի դաստիարակ Անահիտ Առաքելյանը:

<< ԿԳ նախարարության և Հայ առաքելական եկեղեցու կողմից անցկացվող <<Լավագույն ուսուցիչ>> մրցույթի մարզային փուլին մասնակցած 30 ուսուցիչներից մրցույթի եզրափակիչ փուլ են երաշխավորվել Արարատ գյուղի N2 միջնակարգ դպրոցի հայոց լեզու և հայ գրականություն առարկայի ուցուցչուհի Արմինե Հովհաննիսյանը, Այնթապի N1 միջնակարգ դպրոցի հայոց պատմություն առարկայի ուսուցչուհի Տաթևիկ Առաքելյանը, Արտաշատ քաղաքի N1 դպրոցի քիմիայի

ուսուցչուհի Մարինա Ստեփանյանը և Այգավանի միջնակարգ դպրոցի դասվար Բելլա Ստեփանյանը:

Դպրոցներում աշխատում են 3438 մանկավարժներ, որոնցից բարձրագույն կրթություն ունեն 97 %-ը: Մանկավարժական դրույքների թիվը 2223 է, մարզի ուսուցիչների միջին աշխատավարձը 122300 դրամ է, վարչական անձնակազմի միջին աշխատավարձը՝ 140000 դրամ:

2013 թվականի առաջին կիսամյակի ընթացքում նպատակային աշխատանք է տարվել աշակերտներին և ուսուցիչներին դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով և ծրագրերով ապահովելու ուղղությամբ: Վերլուծվել է նոր ուսումնական տարվա համար դպրոցներին անհրաժեշտ դասագրքերի պահանջարկ, ամփոփվել և ԿԳ նախարարություն է ներկայացվել 62296 հատ 5-12-րդ դասարանների դասագրքերի և ուսուցչի ձեռնարկների պահանջարկ:

Մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում պատանիների ռազմահայրենասիրական դաստիարակության համար իրականացվել են տարաբնույթ միջոցառումներ: Մարզային ենթակայության 107 դպրոցներից 103 հանրակրթական դպրոցներ ունեն նախնական զինվորական պատրաստության դասասենյակներ, մնացած 4-ը հիմնական դպրոցներ են, որոնք նախկինում չեն ունեցել զինղեկի հաստիք: 101 դպրոցներ ունեն ուսումնական զենք և զինամթերք:

Մարզի դպրոցներում կան 2208 համակարգչային սարքավորումներ, 1271 համակարգիչ, 116 համակարգչային դասարան:

Մարզի բոլոր դպրոցներն ապահովված են ինտերնետային կապով, ընդ որում 96 դպրոց ընդգրկված են հանրակրթական դպրոցների ինտերնետային ցանցում /<ԴԻՑ/ և <<Dasaran.am>> կրթական ծրագրի մեջ:

Մարզպետարանի կողմից իրականացվում է վերահսկողություն դպրոցական շենքերի պահպանման նկատմամբ:

Որոշակի աշխատանք է կատարվել նախադպրոցական հաստատությունների գործունեության բարելավման ուղղությամբ: 91 նախադպրոցական հիմնարկներում ընդգրկվել են 5980 երեխաներ:

Հանրակրթության զարգացման ուղղությամբ մարզը համագործակցում է միջազգային, հասարակական, բարեգործական կազմակերպությունների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ: